

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ**

18.05.2014

Հարգելի հայրենակիցներ:

Համաշխարհային նշանակության թանգարանների շարքում իրենց ուրույն տեղն ունեն նաեւ Հայաստանի Հանրապետությունում եւ Հայկական Սփյուռքում հիմնված թանգարանները, որոնցով մենք կարողանում ենք հպարտորեն ներկայացնել աշխարհին հայ ժողովրդի կերտած բազմադարյան ու բազմաբովանդակ հոգեւոր ու նյութական մշակութային ժառանգությունը:

Թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ շնորհավորում եմ մեր մարզի թանգարանների աշխատակիցներին, ցանկանում նրանց խաղաղ հայրենիք, երջանկություն եւ հաջողություններ ընտանիքում ու աշխատանքում:

Լավագույն ցանկություններով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան